



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 29 ” հոկտեմբերի 2007թ.

N 457

ք.Ստեփանակերտ

«Ջարգացման արցախյան գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Արցախի ներդրումային հիմնադրամի վերակազմակերպելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 123-րդ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ և «Հիմնադրամների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Ջարգացման արցախյան գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (գրանցման համար՝ 443.210.10962) վերակազմավորման ձևով վերակազմակերպել Արցախի ներդրումային հիմնադրամի:

2. Հաստատել՝

ա) Արցախի ներդրումային հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) Արցախի ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Արցախի ներդրումային հիմնադրամի ժամանակավոր կառավարիչ նշանակել Կարեն Օլեգի Եսայանին:

4. Վերակազմավորման պահին «Ջարգացման արցախյան գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավունքները և պարտականությունները փոխանցել Արցախի ներդրումային հիմնադրամին՝ փոխանցման ակտին համաձայն:

5. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անունից որպես լիազոր մարմին ճանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-Ֆախարարին՝ ապահովել վերակազմակերպման հետ կապված աշխատանքները:

6. Հանձնարարել հիմնադրամի ժամանակավոր կառավարչին՝ 7-օրյա ժամկետում Արցախի ներդրումային հիմնադրամի կանոնադրությունը և փոխանցման ակտը ներկայացնել պետական գրանցման:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ

zargatsman artsakhyan1.



Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ